

**ԻՆՉՈՐԻ ԵՆՔ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԿՈՉՈՒՄ «ՀԱՅՐ»**



**WHY DO WE CALL A PRIEST
“FATHER”?**

Պատրաստեց՝
ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱԲԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

Prepared by
DEACON GEVORK GEVORKIAN

ԵՐԵՒԱՆ 2024



Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:



Սոյն գրքոյկը նուիրուամ է ի Քրիստոս ննջած որդուս՝

ՖԵԼԻՔՍ ԳԵՈՐԳԵԱՆԻ

յաւերժալոյս յիշատակին

1992-1995



ԽՕՍԶ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


Մեզ համար ուրախութիւն է տեսնել Բարշ. Գեորգ Սրկ. Գեորգեանի նոր աշխատասիրութիւնը՝ «Ինչո՞ւ ենք Քահանային կոչում «Յայր»»: Անոր բովանդակութեան մէջ ներկայացուող վերլուծումները, որ նուիրուած են հոգեւորականին «հայր» եւ «տէր» կոչելու՝ յաճախակի հնչող հարցականի պարզաբանութեանը, յիրաւի կարելոր են եւ յստակօրէն ու սուրբգրային հիմնաւորումներով կը լուսաբանեն շատերու համար դեռեւս մթին այս հարցը:

Հոգեւորականը կոչում է ստացած Աստուծմէ ծառայելու իրեն վստահուած ժողովուրդին՝ տարածելու համար Աւետարանի լոյսը: Հետեւաբար հոգեւորականը նուիրումի կեանքով ապրող անձն է, ով բոլորի համար հայր է ու սպասաւոր: Եւ այս դրոյթը Գեորգ Սարկաւազ Գեորգեանը ընթերցողի համար մատուցած եւ մեկնած է ամենայն մանրամասնութիւններով: Հեղինակին գիտականութիւնը յիրաւի վարակիչ են եւ փաստարկումները համոզուածութիւն կը փոխանցեն ընթերցողին:

Մեր ձգտումը մշտապէս պէտք է ըլլայ հարստացնել մեր ներաշխարհը, հոգին, որ «առաւել է, քան զմարմին», եւ այս աշխատութիւնը մի նոր ու լաւ առիթ կ'ընծայէ մեր հաւատացեալներուն՝ մէկդի դնելու եւս մէկ անորոշութիւն. քանզի մաքուր սրտով եւ լուսաբանուած հաւատքով առաւել տեսանելի կը դառնայ Աստուծոյ ներկայութիւնը:

Մեր օրհնութիւնն ու գնահատանքը կը բերենք գրքի հեղինակին, թող որ Բարշ. Գեորգ Սրկ. Գեորգեանի հոգեւոր եւ ստեղծագործական ջանքերը բազմապատկուին՝ ընթերցողներուն հաւատքի նորանոր պարզաբանութիւններ մատուցանելու համար:

Յովնան Արք. Տէրտէրեան



Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի

Արեւմտեան Թեմի

21 Դեկտեմբերի, 2023

ՍՈՒՏՔ

Որոշ ծայրայեղ ուսմունքներ եւ կրօնական հոսանքներ մեղադրում են մեզ, որ մեր եկեղեցականներին կոչում ենք «վարդապետ», «հայր», «տեր»: Նրանք պնդում են, թէ սա հակասում է սուրբգրային վարդապետութեանը, եւ միայն Աստուած է արժանի այդ կոչումներին, քանզի Յիսուս Ինքը տուեց հետեւեալ հրամանը. **«Բայց դուք որեւէ մէկին ուսուցիչ (ռաբբի, վարդապետ) մի՛ կոչէք, որովհետեւ ձեր ուսուցիչը մէկ է... Եւ երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք, որովհետեւ մէկ է ձեր Հայրը, որ երկնքում է: Եւ ուսուցիչներ չկոչուէք, որովհետեւ Քրիստոս է ձեր ուսուցիչը»** (Մատթ. 23, 8-10):

Այստեղ Տէր Յիսուս ուզում էր ասել, որ «ուսուցիչ» կամ «վարդապետ» պետք չէ կոչել այն մարդկանց, որոնք փառքը սիրող մարդիկ են, որոնք ուսուցանում են, բայց իրենց ուսուցանածը չեն կատարում: «Հայր» պետք չէ կոչել այնպիսի մարդկանց, որոնք սիրում են «հայր» կոչուել, բայց հայրութիւն չեն անում, եւ որոնք իրենց հօտերն առաջնորդելու եւ արածեցնելու փոխարէն իրենք իրենց են արածեցնում (տե՛ս Եզեկ. 34, 8): Սուրբգրային եւ առաքելական խօսքերից արդէն երեւում է, որ Տէր Յիսուս մեղադրում է փարիսեցիների ներքին հոգեւոր վիճակը, այսինքն՝ մեղադրում են ո՛չ թէ նրանք, ովքեր եկեղեցականներին կոչում են «վարդապետ», «ուսուցիչ», «հայր», «տեր», այլ նրանք, ովքեր իրենց անձի փառքին ծառայելու համար պահանջում են այդպէս կոչուել՝ իրենց անձերը բարձրացնելով՝ հակառակ Տիրոջ հետեւեալ հրամանի. **«Եւ ձեզնից մեծը ձեր սպասաւորը պիտի լինի: Ով իր անձը բարձրացնում**

Է, կը խոնարհուի. եւ ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրանայ» (Մատթ. 23, 11-12):

Եկեղեցու պատմութեան հէնց սկզբից, ինչպէս դա եղել է Հին կտակարանի ժամանակուայ Իսրայէլում, Աստծու կողմից ծառայութեան համար օծեալներին կոչել են որոշակի ջերմութիւն եւ արժանապատուութիւն արտայայտող անուններով՝ «մարգարէ», «ուսուցիչ», «վարդապետ», «ռաբբի», «հայր», եւ «առաջնորդ»: Ինչպէս մեր ընտանիքներում կայ մէկը, ում մենք սիրով «հայրիկ» ենք կոչում, այնպէս էլ յարգում ու պատում ենք բոլոր նրանց, որոնք մեզ առաջնորդեցին դէպի հոգեւոր վերածնունդը մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:

Արդ, տեսնենք, թէ ի՞նչ պէտք է պատասխանել նման առարկութիւնների դիմաց:



«Որեւէ մէկին ուսուցիչ մի՛ կոչէք...»

➤ Նախ քննենք, թէ ինչո՞ւ է Տէր Յիսուս ասում. **«Բայց դուք որեւէ մէկին ուսուցիչ (ռաբբի, վարդապետ¹) մի՛ կոչէք, որովհետեւ ձեր ուսուցիչը մէկ է»** (Մատթ. 23, 8): Տիրոջ այս պատգամը սուրբ առաքեալները չէին կարող հասկանալ այնպէս, ինչպէս փորձում են այն բացատրել հերձուածող քարոզիչները: Եթէ Յիսուսի խօսքերն իրենց բնագրային շրջագծի մէջ վերցնենք, ապա կը տեսնենք, որ Նա ժողովրդին պարզապէս թելադրում էր կեղծաւորութիւնից եւ ամբարտաւանութիւնից հեռու մնալ եւ անկեղծութեանն ու համեստութեանը հետամուտ լինել (տե՛ս Մատթ. 23, 5-7; 23, 11-12; հմմտ. Գործք 7, 2): Քրիստոս այստեղ խօսում է փարիսեցիների ու Օրէնքի ուսուցիչների մասին, որոնք փառքը փնտռող մարդիկ էին, եւ սիրում էին կոչուել «ուսուցիչ» կամ «վարդապետ»: Տէր Յիսուս դատապարտում է դպիրների եւ փարիսեցիների այդ կեղծաւոր կեցուածքը: Քրիստոս առաջին հերթին պատուիրեց խուսափել կոչումների պատճառով հպարտութիւնից ու սնափառութիւնից, քանզի օրէնսգետներն ու փարիսե-

¹ **Վարդապետ**, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցում կուսակրօն քահանաներին՝ արեղաներին, տրուող գիտական աստիճան: Վարդապետ բառը դասական հայերէնում ունի «ուսուցիչ» հիմնական նշանակութիւնը: Վարդապետին (ինչպէս եւ Աբեղային) անուանում են «Հայր Սուրբ»: Հայ Եկեղեցին ունի վարդապետական տասնչորս աստիճաններ, որոնք շնորհիւմ են յատուկ կրթութիւն աւարտած եւ թեզ ներկայացրած կուսակրօն քահանաներին: Վարդապետի առաջին չորս աստիճանները կոչում են մասնաւոր վարդապետութիւն, իսկ մնացածը կոչում են «ծայրագոյն» վարդապետութիւն:

ցիները, որոշ գիտելիքների տիրապետելով, այնպես էին հպարտանում, կարծես հենց իրենք են ամեն բանի սկզբաղբիւրը: Գիտելիքների եւ մարդկային գոյութեան սկզբնապատճառը Տէր Աստուածն է, ուստի եւ այս բացարձակ իմաստով արգելուած է որեւէ մէկին կոչել «ուսուցիչ» կամ «վարդապետ»:

➤ Թէեւ Յիսուս կարծես արգելում է «ուսուցիչ» կամ «վարդապետ» եզրոյթի օգտագործումը, սակայն Մատթէոսի Աւետարանում Քրիստոս ինքը որոշ մարդկանց իր եկեղեցում ուսուցիչներ նշանակեց՝ նրանց սովորեցնելով պահել այն ամենը, ինչ որ պատուիրել էր. **«Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին... Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի»** (Մատթ. 28, 19–20): Ուստի, հաւատացեալներն այդ կոչումներն օգտագործում են որպէս պարզ պատուանուններ:

➤ Եթէ Տէր Յիսուս արգելում է «ուսուցիչ» կամ «վարդապետ» կոչելը, ուրեմն ինչո՞ւ են հակաճանողներից շատերը նոյնպէս գործածում՝ «ուսուցիչ», «վարդապետ», «դոկտոր», «պրոֆեսոր» կոչումները: Քրիստոսի՝ **«որեւէ մէկին ուսուցիչ մի՛ կոչեք...»** խօսքերն օգտագործելով՝ այսպիսի մեղադրանք հնչեցնելը նշանակում է, թէ դպրոցներում պետք է բնաւ արգելել «ուսուցիչ» բառը, իսկ գիտնականներին պետք է զրկել իրենց բոլոր գիտական կոչումներից եւ տիտղոսներից. զինուորներին պետք է զրկել զինուորական աստիճանակարգութիւնից, իսկ ծնողին էլ պետք է զրկել «հայր» կոչուելուց, որը, իհարկէ, մարդկային առողջ բանակաւորութեան սահմաններից դուրս է:

«Դոկտոր»-ը պարզապես լատիներենից թարգմանած «ուսուցիչ» բառն է: Նոյնիսկ «պարոն» (տիար, mister), «տիրուհի» (տիկին, mistress) եւ «վարպետ» (master) դիմելաձեւերն այն բառերով են, որոնք Յիսուս նոյնպես յիշատակել է: Այսպիսով, Նրա խօսքերը եթէ պետք է բառացիորեն ընդունուեն, ապա «բարենորոգիչները» նոյնքան մեղաւոր կը լինեն «ուսուցիչ», «վարդապետ», «դոկտոր», «պարոն» եւ «տիկին» բառերն օգտագործելու համար, որքան ուղղադաւան հաւատացեալները՝ «վարդապետ» կամ «ուսուցիչ», «հայր» կամ «տէր» ասելու համար: Բայց պարզ է, որ դա կը լինի Քրիստոսի խօսքերի թիրոջնկալում: Աստուածաշունչն ու Քրիստոնէական ասանդութիւնը հաստատում են, որ այս պարագայում Յիսուսի խօսքերը բառացիորեն ու նեղմտօրէն պետք չէ ըմբռնել, այլապէս նոյն տրամաբանութեամբ բողոքական քարոզիչների «պատուելի»², «վերապատուելի», «հովիւ» տիտղոսների գործածութիւնը եւս արտօնուած պիտի չլինէր Յիսուսի կողմից: Յետեւաբար, հակաճառողներին պետք է հարցնել, թէ եթէ դուք այդքան խստապահանջ էք Աստծու խօսքի նկատմամբ, ապա ինչո՞ւ ինքներդ չէք հրաժարուում ձեր տիտղոսներից:

➤ Տէր Յիսուս, ասելով **«ձեր ուսուցիչը մէկ է»**, ակնարկում էր Սուրբ Յոզով: Իսկ կեղծաւոր փարիսեցիներն ու օրէնքի ուսուցիչները կարող էին գիտակցաբար թէ անգիտակցաբար սխալ բաներ ուսուցանել, կարող էին ճշմարտութիւնը չիմանալ կամ էլ այն խե-

² Սա նոյնպէս ուսուցչի տիտղոս է հին խալճայական դպրոցներում:

ղաթիւրել: Այսպիսի բան չի կարող պատահել Սուրբ Զոգու հետ: Յովհաննէս առաքեալը Սուրբ Զոգու մասին ասում է. **«Զոգին ինքն ուսուցանում է ձեզ ամէն ինչի մասին, որ ճշմարիտ է եւ ոչ սուտ»** (Ա. Յովհ. 2, 27): Տէր Յիսուս Սուրբ Զոգուն՝ Մխիթարիչին, ներկայացրեց իբրեւ Ուսուցչի. **«Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Զոգին, որին Զայրը կ'ուղարկի իմ անուամբ, նա ձեզ ամէն բան կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ ես ասացի ձեզ»** (Յովհ. 14, 25): Նաեւ՝ **«Բայց երբ գայ Մխիթարիչը, որին ես ձեզ կ'ուղարկեմ Զօրից, ճշմարտութեան Զոգին, որ ելնում է Զօրից, նա՛ կը վկայի իմ մասին»** (Յովհ. 15, 26):

➤ Տէրն է միակ Ուսուցիչը կամ Վարդապետն այն իմաստով, որ Նա է այն աղբիւրը, **«որից իր անունն է ստանում ամէն ազգատոհմ երկնքում եւ երկրի վրայ»** (Եփես. 3, 15): Չի կարելի տառացիօրէն հասկանալ Յիսուսի ասած «որեւէ մէկին ուսուցիչ մի՛ կոչէք» արտայայտութիւնը, այլապէս Քրիստոս ինքնիրեն կը հակասի, քանի որ Նա վարդապետ կոչեց Նիկողէմնոսին. **«Դո՛ւ ես Իսրայելի վարդապետը եւ դա չգիտե՛ս»** (Յովհ. 3, 10): Եթէ մեր Տէրը նրան «վարդապետ» կոչեց, ով Աստծու խօսքի եւ օրէնքի քարոզիչն էր, ուրեմն ինչո՞ւ մերժել վարդապետ կամ ուսուցիչ կոչել Աստծու խօսքն ու օրէնքը քարոզող մեր օրերի եկեղեցականներին:

➤ «Գործք Առաքելոց»-ում գրուած է. **«Աւստիոքում գտնուող եկեղեցում կային մի քանի մարգարէներ եւ ուսուցիչներ՝ Բառնաբասը եւ Շմաւոնը, որ կոչւում էր Նիւգեր, Ղուկիոս Կիւրենացին, Մանայէնը»** (Գործք 13, 1): Եթէ Ղուկաս աւետարանիչն Աւստիոքի եկեղեցում

ուսուցանող մարդկանց «ուսուցիչներ» է կոչում, ապա ինչո՞ւ են ոմանք մերժում «վարդապետ» կոչել այսօրուայ եկեղեցում ուսուցանող հոգեւորականներին: Նմանապես, Յակոբոս առաքեալն Աստծու խօսքի քարոզիչներին կոչում է «ուսուցանողներ»։ **«Եղբայրներ՛ իմ, շատերդ ուսուցանողներ լինելու չձգտէք: Իմացէ՛ք, որ մեծ դատաստան ենք ընդունելու»** (Յակ. 3, 1):

➤ Պօղոս առաքեալն էլ վկայում է. **«Եւ ում որ Աստուած կարգեց եկեղեցու մեջ, սրանք են. նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ ուսուցանողներ... (վարդապետներ)»** (Ա. Կորնթ. 12, 28): Եւ դարձեալ՝ **«Նա շնորհ տուեց ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝ մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչներ, ոմանց՝ հովիւներ եւ ուսուցիչներ (վարդապետներ)»** (Եփես. 4, 11): Եթէ սա է Աստծու կամքը, ուրեմն ինչո՞ւ Նրանց չանուանել վարդապետներ: Պօղոս առաքեալը Նոյնպէս ասում է. **«Աշակերտը թող մասնակից անի ուսուցչին բոլոր բարի բաներում»** (Գաղ. 6, 6): Այս խօսքով Նա պատուիրում է, որպէսզի աշակերտները յարգանք ցուցաբերեն վարդապետների հանդէպ: Առաքեալը Նաեւ հաստատում է, որ պիտի գայ ժամանակ, երբ մարդիկ չեն լսելու ողջամիտ վարդապետութեանը, այլ՝ սեփական ցանկութիւններին համապատասխ եւ իրենց հաճելի բաների մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտռեն: **«Պիտի գայ ժամանակ, երբ պիտի չանսան ողջամիտ վարդապետութեանը, այն, իւրաքանչիւրն ըստ իր ցանկութիւնների, ուսուցիչներ պիտի հաւաքի իր շուրջը՝ իր ականջներին հաճելի բաներ լսելու մարմաջով»** (Բ. Տիմ. 4, 3): Եթէ առաքեալը

Նոյնիսկ կեղծ ուսուցիչներին է անուանում «ուսուցիչներ», ապա որքան առաւել պետք է ուսուցիչ կոչել ճշմարտութեան քարոզիչներին:

➤ Տէր Յիսուս ասաց. **«Եւ ուսուցիչներ չկոչուէք, որովհետեւ Քրիստոս է ձեր ուսուցիչը»** (Մատթ. 23, 10): Մեր Ուսուցիչը եւ մեր փրկութեան միակ Առաջնորդը Քրիստոս ինքն է: Տիրոջ այս խօսքն իր նախորդ խօսքերից տարբեր է: Առաջին երկուսի մէջ Յիսուս ասում է. **«Որեւէ մեկին ուսուցիչ մի՛ կոչէք»**, եւ **«ոչ մեկին ձեզ հայր մի՛ կոչէք»**, իսկ հիմա Նա չի ասում **«չկոչէք»**, այլ ասում է՝ **«չկոչուէք»**: «Չկոչէք» ասելը տարբեր է, «չկոչուէք»-ը՝ տարբեր: Ասելով «չկոչուէք»՝ Տէր Յիսուս ցոյց է տալիս, որ որեւէ մարդ թող չկարծի, թէ ինքն է մարդկանց առաջնորդում փրկութեան, որի հեղինակը Տէր Աստուած է. **«Տէրը օրեցօր փրկուածներին նրանց թուի վրայ անելացնում էր»** (Գործք 2, 47):

➤ Տէր Յիսուս զգուշացրեց. **«Բայց դուք այդպէս չիւնէք, այլ՝ ով որ մեծ է ձեր մէջ, թող լինի ինչպէս կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպէս սպասաւորը»** (Ղուկ. 22, 26): Յիսուսի այս խօսքով հաստատում է, որ իսկական առաջնորդը կամ ուսուցիչը պետք է իրեն տեսնի որպէս փրկութեան ու ճշմարտութեան սպասաւոր, եւ ոչ թէ առաջնորդ: Պօղոս առաքեալը տարբեր առիթներով եկեղեցու ճշմարիտ սպասաւորին անուանում է առաջնորդ. **«Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծու խօսքն ասացին... Լսեցէ՛ք ձեր առաջնորդներին եւ հնազանդուեցէ՛ք նրանց, որովհետեւ նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիւ են տալու ձեր փոխարէն»** (Եբր. 13, 7. 17): Եւ

դարձեալ՝ «Տիրոջ կողմից ձեր վրայ նշանակուած առաջնորդներին, ինչպէս նաեւ ձեզ խրատողներին» (Ա. Թես. 5, 12):

«Ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք...»

➤ Աղանդաւորական շարժումների յետեւորդները մեղադրում են մեզ՝ ասելով, թէ բոլոր ուղղափառան եւ կաթոլիկ եկեղեցականները, արհամարհելով Քրիստոսի այս պատուիրանը մարդկանց ստիպում են իրենց կոչել «հայր»: Մինչդէռ Տէր Յիսուս ցանկանում էր ասել, որ միայն մէկ Արարիչ եւ երկնաւոր Յայր կայ, ով կարեկցում է ընկածին ու թշուառին, գուրգուրում է Օրէնքի լծի տակ հիւժուողներին եւ հսկում իր զաւակներին՝ չարից ազատագրելու համար: Ինչպէս արդէն նշել էինք, այսպիսին չէին փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները: Նրանք իրենց հետեւորդներին Օրէնքի լծից ազատագրելու փոխարէն, ընդհակառակը, Մովսիսական Օրէնքի լծի ստրուկներ էին դարձնում: Պէտք չէ «հայր» կոչել այնպիսիներին, որոնք սիրում են «հայր» կոչուել, բայց հայրութիւն չեն անում, որոնք իրենց հօտերն առաջնորդելու կամ արածեցնելու փոխարէն իրենք իրենց են արածեցնում: Եզեկիէլ մարգարէն յայտնում է. **«Այն բանի համար, որ իմ հօտերն աւարի մատնուեցին, իմ հօտերն անապատի գազաններին կեր դարձան, որովհետեւ հովիւներ չկային, հովիւներն իմ հօտերը չփնտռեցին, հովիւներն իրենք իրենց բտեցին-պարարտացրին եւ իմ հօտերը չարածեցրին»** (Եզեկ. 34, 8-9): Ահա այդպիսին էին փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները: Դրա հա-

մար էլ Ամենակալ Տէր Աստուած ասում է. **«Ահաւասիկ ես այդ հովիւներին դէմ եմ ու հօտերս վերցնելու եմ դրանց ձեռքից, արգելելու եմ դրանց, որ արածեցնեն հօտերս, եւ այլեւս դրանք չեն արածեցնելու»** (Եզեկ. 34, 10):

➤ Ծնողի համար «հայր» բառն առաջին անգամ Աստծու հաւանութեամբ գործածեց Ադամը, երբ խօսելով կնոջ մասին՝ ասաց. **«Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հօրն ու մօրը, պէտք է միանայ իր կնոջը»** (Ծննդ. 2, 24): Աստուած Ինքը ծնողի համար գործածեց «հայր» բառը տասը պատուիրանների մէջ՝ ասելով. **«Պատուիր թո հօրն ու թո մօրը...»** (Ելք 20, 12: Բ. Օրին. 5, 16): Իսկ Առակների գրքում Սողոմոն Իմաստունն ասում է. **«Լսի՛ր, որդեա՛կ, քեզ ծնող հօրը»** (Առակ. 23, 22):

➤ Աստուածաշնչում «հայրութիւն» հասկացութիւնը չի սահմանափակւում միայն մեր երկրային հայրերով եւ Աստծով: Այն օգտագործւում է նաեւ այլ մարդկանց յիշատակելու համար: Բացի կենսաբանական կամ օրինական հայրերից՝ «հայր» բառն օգտագործւում է որպէս յարգանքի ու պատուի նշան նրանց հանդէպ, ում հետ մենք յատուկ յարաբերութիւններ ունենք: Օրինակ՝ Յովսէփն իր եղբայրներին պատմում է Եգիպտոսի թագաւորի հետ Աստծու կողմից իրեն տրուած յատուկ հայրական յարաբերութիւնների մասին. **«Արդ, ոչ թէ դուք էք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստուած: Նա ինձ դարձրեց փարաւօնի հայր եւ նրա ողջ տան տէրը եւ համայն Եգիպտացիների երկրի իշխանը»** (Ծննդ. 45, 8-9): Յոբը ցոյց է տալիս, որ նա հայրական դեր է խաղացել աղքատների համար. **«Կոյրին աչք էի եւ կաղ մարդուն՝ ոտք ու**

խեղճերին՝ հայր: Դատ էի անում նրան, ում բնաւ չէի ճանաչում» (Յոբ 29, 16): Աստուած յայտարարում է, որ հայրական դեր է տալու Դաւթի տան տնտեսին՝ Եղիակիմին. «Այն օրը պիտի կանչեմ իմ ծառայ Եղիակիմին, նրան պիտի հազցնեմ քո պատմութեանը, պիտի տամ նրան քո պսակն իր ճոխութեամբ, քո հազարապետութիւնը նրա ձեռքը պիտի տամ, եւ թող նա հայրը դառնայ Երուսաղէմի ու Յուդայի երկրի բնակիչների» (Ես. 22, 20–21): Հայրութեան այս տեսակը վերաբերում է ոչ միայն նրանց, ովքեր իմաստուն խորհրդատուներ են, ինչպէս Յովսէփը, այլեւ նրանց, ովքեր բարերարներ են, ինչպէս Յորը: Դա վերաբերում է նաեւ նրանց, ովքեր հայրաբար հոգեւոր յարաբերութիւններ ունեն ինչ-որ մէկի հետ: Օրինակ՝ Եղիսէն նայեց Եղիային, երբ վերջիսս երկինք էր բարձրանում մրրիկի մէջ՝ աղաղակելով **«Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայէլի կառքը եւ նրա հեծեալը»** (Բ. Թագ. 2, 12) Աւելի ուշ Եղիսէն ինքն է Իսրայէլի թագաւորի կողմից «հայր» կոչուում. **«Երբ Իսրայէլի արքան տեսաւ նրանց, ասաց Եղիսէին. «Սպանե՛մ սրանց, հա՛յր իմ»** (Բ. Թագ. 6, 21):

➤ Յիսուս, ասելով «ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչեք», օգտագործում է «հիպերբոլիա» (չափազանցութիւն)՝ իր յետեւորդներին նախազգուշացնելու համար, որ ոչ ոք պէտք չէ հպարտութեամբ ձգտի պատուոյ կոչումների: Նրա խօսքերը բառացիօրէն չեն հասկացուում այդ համատեքստում: Նոր ուխտի քահանաների հոգեւոր հայրութիւնը Հին ուխտի քահանաների նկատմամբ դրա կիրառման ընդլայնումն է: Դատաւորների գրքում ասուում է. **«Միքան նրան ասաց. «Մնա՛ ինձ մօտ, ինձ համար**

հայր եւ քահանայ եղի՛ր...» (Դատ. 17, 10): Նմանապէս՝
«**Նրանք ասացին նրան. «Լռի՛ր, ձեռքդ բերանիդ վրայ
դի՛ր, ե՛կ մեզ հետ եւ մեզ համար հայր ու քահանայ
եղիր»**» (Դատ. 18, 19):

➤ Որոշ բողոքականներ պնդում են, որ մարդկանց
«հայր» անուանելու գործածութիւնը փոխուել է Նոր
կտակարանում, որ թէեւ Հին կտակարանում որոշ
մարդկանց «հայր» կոչելը կարող էր թոյլատրուել,
սակայն Քրիստոսի ժամանակներից ի վեր դա այլեւս
թոյլատրուած չէ: Այս պնդումը, իհարկէ, ձախողւում է
բազմաթիւ պատճառներով: «Երկրի վրայ ոչ մէկին ձեզ
հայր մի՛ կոչէք» խօսքերը նոյնպէս չի կարելի բա-
ռացիօրէն հասկանալ, այլապէս՝ Քրիստոս Ինքնիրեն կը
հակասի: Յիսուս Ինքն իսկ գործածեց «հայր» բառը
երկրաւոր հայրերի համար (տե՛ս Մատթ. 7, 9): Աղքատ
Ղազարոսի եւ մեծահարուստի մասին առակներ պատ-
մելով՝ Տէր Յիսուս ցոյց տուեց, թէ ինչպէս դժոխքի
տանջանքներում գտնուող մեծահարուստը, տեսնելով
Աբրահամին եւ Ղազարոսին նրա գրկում, աղաղակեց եւ
ասաց. **«Հայր Աբրահամ, ողորմի՛ր ինձ»** (Ղուկ. 16, 24):
Այստեղ նա Աբրահամին «հայր» անուանեց, իսկ Աբրա-
համը նրան կոչեց «որդեակ»: Աբրահամը ոչ միայն
հրեաների հայրն էր, այլ հայր եղաւ բոլոր հաւատա-
ցեալներին. **«Եւ նա ստացաւ թլփատութիւնը իբրեւ
նշան, իբրեւ կնիք այն հաւատի արդարութեան, որ
ունէր անթլփատութեան ժամանակ, որպէսզի նա հայր
լինի բոլոր հաւատացեալներին»** (Հռոմ. 4, 11): Ուրեմն,
բոլոր ազգութիւնները կարող են Աբրահամին հոգեւոր
ժառանգորդներ լինել. **«Քեզ կարգեցի հայր բազում**

ազգերի: Նա հայր է Աստծու առաջ, որին հաւատաց, թէ կենդանացնում է մեռելներին եւ չեղած բաները գոյութեան է կոչում: Աբրահամը, որ անյուսուլթեան մէջ էր, յոյսով հաւատաց, որ ինքը կը լինի բազում ազգերի հայր, ինչպէս որ ասուել էր» (Հռոմ. 4, 17-18): Առաքեալն Աբրահամին բազում ազգերի հայր է անուանում. «Աբրահամը, որ անյուսուլթեան մէջ էր, յոյսով հաւատաց, որ ինքը կը լինի բազում ազգերի հայր» (Հռոմ. 4, 16):

➤ Յիսուս առակ է պատմում, որտեղ որդին դիմում է իր մարմնաւոր հօրը՝ ասելով. «Հայր, մեղանչեցի երկնքի դէմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու» (Ղուկ. 15, 21): Բայց Յիսուս էլ չի մեղադրում անառակ որդուն, երբ նա իր մարմնաւոր ծնողին «հայր» է կոչում:

➤ Մատթէոս աւետարանիչը Յիսուսի այս խիստ խօսքերը («Երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք») լսելուց յետոյ իր Աւետարանում գրեց, թէ Յիսուս տեսաւ Յակոբոսին եւ նրա եղբայր Յովհաննէսին նաւակի մէջ «իրենց հօր՝ Չեբեդիոսի հետ միասին» (Մատթ. 4, 21):

➤ Առաքեալները «Հայր» են կոչում ո՛չ միայն Աստծուն: Պետրոս առաքեալն ասում է. «Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը, մեր հայրերի Աստուածը փառաւորեց իր Որդուն՝ Յիսուսին» (Գործք 3, 13): Նմանապէս՝ «Մեր հայրերի Աստուածը յարուբիւն տուեց Յիսուսին» (Գործք 5, 30): Իսկ Յովհաննէս առաքեալն իր նամակում գրեց. «Մեր հայրերի Աստուածը յարուբիւն տուեց Յիսուսին, որին դուք սպանեցիք՝ խաչափայտից կախելով» (Ա. Յովհ. 2, 13):

➤ Պօղոս առաքեալը յստակօրէն ցոյց է տալիս, որ մեր երկրաւոր հայրերին պէտք է «հայր» կոչել, քանզի ասում է. **«Յիրաւի, եթէ պատկառում ենք մեր մարմնաւոր հայրերից, որոնք մեզ խրատում են, որչա՛փ եւս առաւել պէտք է հնազանդուենք հոգիների Յօրը, որ ապրենք»** (Եբր. 12, 8): Եգիպտոսից դուրս եկող իր նախահայրերի մասին խօսելով՝ նա ասում է. **«Եղբայրներ՛, չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդութեան տակ էին եւ բոլորն էլ ծովով անցան»** (Ա. Կորնթ. 10, 1): Առաքեալը Նոյնն ասաց՝ դիմելով ժողովրդին. **«Եղբայրներ՛ եւ հայրեր, այժմ լսեցե՛ք ինձ, որ տամ իմ պաշտպանողականը»** (Գործք 22, 1):

➤ Դարերով աւանդաբար փոխանցւում է հայր-որդի հոգեւոր կապը: Յովհաննէս առաքեալն իր բոլոր աշակերտներին դիմում է. **«Որդեակներ՛ իմ...»** (Ա. Յովհ. 2, 1): Նոյնն ասում էր Պօղոս առաքեալը. **«Որդեակներ՛ս, դուք, որոնց համար վերստին երկունքի մէջ եմ, մինչեւ որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ»** (Գաղ. 4, 19): Պէտք չէ՞ արդեօք «հայր» կոչել այն քահանային, ով Պօղոս առաքեալի նման երկունքի ցաւ է քաշում իր հաւատացեալների համար: Պօղոս առաքեալը հայրական սիրով դիմում է Տիտոսին. **«Տիտոսին՝ հասարակաց հաւատի մէջ իմ սիրելի որդուն...»** (Տիտ. 1, 4): Իսկ Տիմոթէոսին գրում է. **«Տիմոթէոսին՝ հաւատի մէջ իմ սիրելի որդուն...»** (Ա. Տիմ. 1, 2): Փիլիպոսին ասում է. **«Ինձ հետ Աւետարանին ծառայեց այնպէս, ինչպէս որդին՝ հօրը»** (Փիլիպ. 2, 22): Իսկ թեսաղոնիկեցիների Եկեղեցու հաւատացեալներին գրում է. **«Ինչպէս գիտեք**

Էլ, ձեզնից իւրաքանչիւրին, ինչպէս հայրը՝ որդիներին, մխիթարում էինք եւ սփոփում ու վկայութիւն էինք տալիս, որ դուք ընթանաք Աստծուն արժանի կերպով» (Ա. Թես. 2, 11):

➤ Պօղոս առաքեալը տարբեր առիթներով ինքնիրեն «հայր» է կոչում: Փիլիմոնին ուղղուած իր նամակում գրում է. «Աղաչում եմ քեզ իմ որդու՝ Օնեսիմոսի համար, որի հոգեւոր հայրը եղայ ես իմ կապանքների մէջ» (Փիլ. 1, 10): Տիտոսն ու Տիմոթէոսը, Օնեսիմոսը եւ բոլոր առաքեալների աշակերտներն իրենց հերթին համապատասխանաբար որդիական սիրով ընդունում ու պատուում էին իրենց հոգեւոր հայրերին: Եթէ հարազատ ու մարմնաւոր հայրերին պատուում ենք «հայր» կոչելով, ինչո՞ւ չի կարելի նաեւ «հայր» կոչել նրանց, որոնք մեզ համար հոգեպէս «**ծննդական ցաւ են քաշում**» (տե՛ս Գաղ. 4, 19), որոնք խրատում ու մխիթարում են, որպէսզի մենք հոգեպէս վերածնունդէք առաւել աճելով հաւատից հաւատ: Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքերից հասկանում ենք, թէ ինչո՞ւ է նա ինքնիրեն կոչում է հաւատացեալների հայր: Թերեւս Նոր կտակարանի ամենաընդգծուած յղումը քահանաների հոգեւոր հայրութեան աստուածաբանութեանը Պօղոսի առաքեալի յայտարարութիւնն է. «Ոչ թէ ձեզ ամօթով թողնելու համար եմ գրում սա, այլ խրատում եմ ձեզ՝ իբրեւ սիրելի որդիների: Թէպէտ եւ բիւր դաստիարակներ ունէք Քրիստոսով, բայց ոչ՝ բազում հայրերը. որովհետեւ Քրիստոս Յիսուսի Աւետարանով ե՛ս ծնեցի ձեզ: Արդ, աղաչում եմ ձեզ, նմանուեցե՛ք ինձ: Դրա համար ձեզ մօտ ուղարկեցի Տիմոթէոսին, որ իմ սիրելի որդին է եւ

հաւատարիմ՝ ի Տէր, որպէսզի յիշեցնի ձեզ իմ ճանապարհները ի Քրիստոս Յիսուս, ինչպէս որ ամենուրեք ուսուցանում եմ բոլոր եկեղեցիներում» (Ա. Կորնթ. 4, 14-17):

➤ Մարդիկ հակուած են դիմելու ինչ-որ արտաքին իշխանութեան: Այդ առիթով Պօղոս առաքեալը պաշտպանում էր իր հայրութիւնը՝ գրելով. **«Եւ արդ, ասում եմ. ձեզնից իւրաքանչիւրն ասում է՝ ես Պօղոսեան եմ, եւ միւսը, թէ՛ ես Ապողոսեան, եւ միւսը, թէ՛ ես՝ Կեփասեան, եւ միւսը թէ՛ ես՝ Քրիստոսեան. իսկ արդ, միթէ բաժանուած է Քրիստոս. միթէ Պօղոսը խաչուեց ձեզ համար. կամ Պօղոսի՞ անունով մկրտուեցիք»** (Ա. Կորնթ. 1, 12-13): Ահա թէ ինչն է Քրիստոս արգելում՝ աղանդաւորութիւնը, որտեղ ուսուցչի անունը դառնում է պայքարի դրոշ ընդդէմ այլ աղանդաւոր հետեւորդների: Բայց հոգեւոր կապերը, որոնք նման են հօր եւ զաւակների փոխյարաբերութիւններին, Տէր Յիսուս ակնյայտօրէն մտադիր չէր արգելել:

➤ Նոր ուխտի առաջին մարտիրոս սբ. Ստեփանոս Նախավկան, ներշնչուած Սուրբ Յոզուց, քահանայապետի հարցին պատասխանեց հետեւեալ կերպ. **«Եղբայրե՛ր եւ հայրե՛ր, լսեցե՛ք ինձ. փառքի Աստուածը երեւաց մեր հօրը՝ Աբրահամին»** (Գործք 7, 2): Ինչպէ՞ս Սուրբ Յոզին սբ. Ստեփանոսին կարող էր ներշնչել փարիսեցիներին «հայրեր» անուանել, եթէ Քրիստոս արգելում էր: Սբ. Ստեփանոսը, յիշելով Մովսէսին, ասում է. **«Ա՛յս Մովսէսն է, որ անապատում հաւաքուած ժողովրդի եւ այն հրեշտակի միջեւ էր, որ Սինա լեռան վրայ խօսեց Նրա հետ եւ մեր հայրերի հետ. նա՛ է, որ կենարար**

պատգամներ ընդունեց՝ մեզ տալու համար: Մեր հայրերը չուզեցին հնազանդուել նրան, այլ նրան մերժեցին ու իրենց սրտերով դեպի Եգիպտոս դարձան» (Գործք 7, 38-39): Յետոյ շարունակում է. «Անապատում մեր հայրերի հետ էր վկայութեան խորանը. ինչպես նա, որ խօսեց Մովսէսի հետ, հրաման տուեց շինել այն՝ ըստ այն օրինակի, որ ինքը տեսել էր: Եւ մեր հայրերն էլ, այն առնելով, բերեցին, երբ Յեսուի հետ գրաւեցին այն ազգերի երկիրը, որոնց Աստուած վտարեց մեր հայրերի առջեւից» (Գործք 7, 44-45): Եւ դարձեալ ասում է. «Կամակորնէ՛ր, որոնց սիրտն ու ականջները փակ են Աստծու կոչին, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակում էք. ինչպես որ ձեր հայրերն էին, այնպես էլ՝ դուք: Ձեր հայրերը մարգարէներից որի՞ն չհալածեցին: Եւ սպանեցին նրանց, որոնք նախօրօք պատմեցին Արդարի գալստեան մասին, որի մատնիչներն ու սպանողները եղաք դուք այժմ» (Գործք 7, 51-52):

➤ Յիսուս իր աշակերտներին ասում է հետեւեալ շատ կարեւոր խօսքերը. «Եւ ամէն ոք, ով թողել է տուն կամ եղբայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ կին կամ որդիներ կամ ազարակներ՝ իմ անուան համար, հարիւրապատիկ պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը պիտի ժառանգի» (Մատթ. 19, 29): Եւ դարձեալ՝ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, չկայ մէկը, որ թողած լինի տուն կամ եղբայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ որդիներ կամ ազարակներ ինձ համար կամ Աւետարանի համար» (Մարկ. 10, 29): Նրանք, ովքեր իրենց տներն ու ընտանիքները թողնում էին Քրիստոսի համար, նրանց հարազատների պէս էին ընդունում

ուրիշ քրիստոնեական ընտանիքներում: Իսկ բոլոր նրանք, որոնք ծառայում էին Յիսուսին, ամենայն սիրով եւ հոգատարութեամբ մարդկանց հոգիներն առաջնորդում էին դեպի Քրիստոս, եւ հոգեւոր հայրեր դառնում նրանց համար: Բոլոր առաքեալները հայրեր էին քրիստոնեաների համար, իսկ բոլոր քրիստոնեաները՝ իրար հանդեպ եղբայրներ ու քոյրեր: Ինչպէ՞ս պետք էր կատարուէր Քրիստոսի այս պատուիրանը, թէ քրիստոնեաները հարիւրապատիկ հայրեր պիտի ունենան, եթէ նրանք չեն կարող ո՛չ մէկին հայր կոչել:

➤ Քրիստոս, ասելով **«երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք»**, խօսում է ոչ թէ արտաքինի, այլ ներքինի մասին: Նա դատապարտում է ոչ թէ «հայր» կոչելը, այլ հոգու ներքին այն վիճակը, որը կարող է արտացոլուել նման կոչման մեջ: Եւ դատապարտում է ոչ թէ «հայր» ասողը, այլ ինքն իրեն նման հասցեագրում պահանջողը: Գոյութիւն ունի ունայն ցանկութիւն, կայ ժողովների նախագահութեան եւ պատուի ցանկութիւն, եւ սա՛ է, որ Քրիստոս դատապարտում է: Դատապարտելի է ոչ թէ այն, որ իւրաքանչիւր հասարակութեան մեջ իսկապէս կան ուսուցիչներ եւ աշակերտներ, այլ դատապարտելի է մարդու անձի վեհացման հպարտ ցանկութիւնը: Եւ սա միայն հոգեւորականների մեղքը չէ, այլ շատ ավելի տարածուած մեղք է:

➤ Բոլոր քրիստոնեաները գիտեն, թէ կեանքի միակ աղբիւրը երկնաւոր Հայրն է եւ միմիայն Աստծուն պետք է պաշտել ու երկրպագել: Բայց հարկաւոր է նաեւ սիրել ու պատուել հոգեւոր առաջնորդներին ու հայրերին, որոնց միջոցով իմանում ենք Աստծու մասին: Պետք է սիրել ու

պատուել նաեւ մեր երկրաւոր հայրերին ու մայրերին, ըստ պատուիրանի՝ **«Պատուի՛ր քո հօրն ու մօրը»** (Մարկ. 10, 19): Իսկ այն աղանդաւոր հոսանքները, որոնք այս պատուիրանը սովորեցնում են իրենց լսողներին, պետք չէ շտապեն ուղղադաւաններին մեղադրել: Օգտակար է նաեւ կարգալ սուրբգրային հետեւեալ վկայութիւնները. **«Յայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, այլ մեծացրէ՛ք նրանց Տիրոջ խրատով եւ ուսմամբ»** (Եփես. 6, 4): **«Ծերին խստութեամբ մի՛ յանդիմանի՛ր, այլ յորդորի՛ր որպէս քո հօրը. Երիտասարդներին յորդորի՛ր որպէս եղբայրների»** (Ա. Տիմ. 5, 1): **«Խրատին համբերող էք, Աստուած ձեզ կը մօտենայ իբրեւ որդիների: Ո՞րն է այն որդին, որին հայրը չի խրատում: Եթէ մնաք առանց խրատի, որին բոլորն են բաժնեկից, ապա խորթ էք եւ ոչ թէ հարազատ որդի. յիրաւի, եթէ պատկառում ենք մեր մարմնաւոր հայրերից, որոնք մեզ խրատում են, որչա՛փ առաւել եւս պետք է հնազանդուենք հոգիների Յօրը, որ ապրենք»** (Եբր. 12, 7-9):

➤ Իւրաքանչիւր մարդ կրում է աստուածային կատարելութիւնների եւ Աստծու կերպարի յատկանիշների դրոշմը: Քանի որ այս յատկանիշները բացայայտում են Քրիստոսի կեանքի միջոցով, մարդն աւելի ու աւելի է նմանում Աստծուն: Ենթադրում է, որ եկեղեցականներն ընտրում էին ամենաարդար եւ արժանաւոր քրիստոնեաներից (տե՛ս Գործք 6, 3): Սա նշանակում է, որ քահանան՝ Նոյնիսկ որպէս մարդ, միւսներից աւելի շատ է իր մէջ արտացոլում է երկնային Յօր կատարելութիւնները: Քահանան իր հովուական գործունեութեան ընթացքում կատարում է Ս. Մկրտու-

թեան խորհուրդը եւ հոգեպէս սնուցում իրեն վստահուած համայնքի անդամներին՝ ցուցաբերելով անկեղծ զոհաբերական սէր եւ հոգատարութիւն իր հօտի նկատմամբ, լինելով իր հոգեւոր զաւակների հոգեւոր հայրը:

➤ Քահանային կոչում ենք «հայր», որովհետեւ իր ծառայութեան մէջ նա նմանուում է երկնային Յօրը, ու բացի դրանից՝ նմանուում է լաւագոյն երկրային հայրերին, որպէս իր սիրելի զաւակների բարեխիղճ խնամակալներ եւ դաստիարակներ: Այդ պատճառով Նրան կոչում են հայր: Քրիստոս դատապարտեց իրեայ դպիրներին ու փարիսեցիներին, որոնք թէեւ ճիշդ բաներ էին ասում, բայց Նրանց գործերը չէին համապատասխանում իրենց խօսքերին: Տէրն ասում է. **«Ամէն ինչ, որ Նրանք ձեզ ասեն, արէ՛ք եւ պահեցէ՛ք, բայց մի՛ արեք ըստ Նրանց գործերի, քանի որ ասում են, բայց չեն անում»** (Մատթ. 23, 3): Փրկչի այս խօսքերը նաեւ մեզ են ուղղուած, եւ սա նախազգուշացում է մեզ, որպէսզի չնմանուենք Նրանց:

➤ Ոչ մէկին չի կարելի ստիպել՝ այս կամ այն մարդուն դիմելու «հայր» բառով: Քահանային «հայր» կոչելը եկեղեցական դոգմայի պահանջ չէ, այլ սրտակից, ընտանեկան ու մտերմական կոչ է: Կան խօսքեր, անուանումներ, որոնք գործածուում են միայն մտերմիկ միջավայրում կամ ազգականների միջեւ: Անհնար է արգելել սիրոյ այս դրսեւորումները: Չես կարող արգելել եղբօրը «եղբայր» կոչուել, իսկ հոգեւոր հօրը՝ «հայր»: Եթէ մեր ընտանիքների հայրերին կարելի է հայր կոչել, որքա՛ն աւելի կարելի է հայր կոչել Աստծու Ընտանիքի՝

Եկեղեցու այն հովիվներին, որոնք Քրիստոսի կողմից են կարգուած՝ հայր լինելու եւ հայրութիւն անելու Իր Մարմնի՝ Եկեղեցու անդամներին:

➤ Հայր կոչուելը վերաբերում է սիրոյ այն մտերիմ յարաբերութեանը, որը ներկայ է ընտանիքներում: Եկեղեցու բոլոր հաւատացեալները մէկ հոգեւոր ընտանիք են կազմում, եւ ինչպէս որ լինում են հոգեւոր եղբայրներ ու քոյրեր, այդպէս էլ պիտի լինեն հոգեւոր հայրեր եւ զաւակներ: Ուստի «հայր» յարգալիր տիտղոսը լիովին համապատասխանում է ձեռնադրուած օծեալ քահանային, ով օժտուած է աստուածային շնորհներով: Մենք քահանային «հայր» ենք կոչում, քանի որ Քրիստոսի սուրբ հաւատքին վերաբերող բոլոր հարցերում ընտրեալ քահանան կատարում է իր հայրական պարտականութիւնները՝ ներկայացնելով երկնային Հօրը: Իսկ հաւատացեալները համարում են նրա հոգեզաւակները, որոնց համար նա հոգ է տանում հայրաբար:

➤ Աղանդաւորները մերժում են եկեղեցականներին «հայր» կոչել ոչ թէ այն բանի համար, որ հետեւում եւ հնազանդում Յիսուսի խօսքին, այլ որովհետեւ մերժում են առաքելական օրինական յաջորդականութիւնն ու եկեղեցական իշխանութիւնը: Նոյնիսկ բողոքական նորոգչութեան ամենավաղ առաջնորդներից մէկը՝ Ժան Կալուինը ինքը հաւատում էր, որ Պօղոս առաքեալը ճշգրտօրէն իրեն «հայր» է անուանում: Նա գրել է. «Մինչ Պօղոսը յաւակնում է իրեն «հայր» անուանելու կոչմանը, նա դա անում է այնպէս է, որ չխլի կամ չնուազեցնի Աստծուն շնորուած պատիւը... Միայն Աստուած է Հայրը

բոլոր Իրեն հաւատացողների, սակայն նրանց, որոնց Ինքը ծառայութեան շնորհ է պարգեւում այդ նպատակի համար, նոյնիսկ արտօնում է կիսուել նրա հետ՝ ի պատիւ նրա»³:

➤ Եկեղեցականին կոչում են «հայր», որովհետեւ նա հոգեւոր հայր է եւ տէր է կանգնում իր հոգեւոր հօտին ու Աստծուց ստացած իշխանութեամբ առաջնորդում է իր հաւատացեալ հօտին: Քանի որ Աստուածաշունչը յաճախ է խօսում այս հոգեւոր հայրութեան մասին, մենք ընդունում ենք դա եւ հետեւում ենք առաքեալների սովորութեանը՝ քահանաներին «հայր» կոչելով: Սա չընդունելը նշանակում է չճանաչել եւ չյարգել Աստծու կողմից Եկեղեցուն շնորհուած մեծ պարգեւը՝ քահանայութեան հոգեւոր հայրութիւնը:

Նոյն ոգով, ինչպէս հայրն իր անառակ որդու հետ, քահանան պէտք է հաշտեցնի մեղաւորներին, որոնք մոլորուած են, բայց ճանապարհ են փնտռում դէպի Աստուած: Ինչպէս հայրն է լսում իր զաւակին, այնպէս էլ քահանան պէտք է լսի իր հոգեւոր զաւակներին՝ տալով խորհուրդ եւ մխիթարութիւն: Մենք բոլորս պէտք է մշտապէս աղօթենք մեր քահանայ հայրերի համար, յատկապէս նրանց համար, ովքեր ծառայում են մեր ծովսերում, որպէսզի Աստծու շնորհով նրանք ձգտեն կատարելու հայր լինելու իրենց սուրբ պարտականութիւնը:

➤ Պատուոյ կոչումներն ու տիտղոսները կապուած են ոչ թէ կոնկրետ անձի, այլ այն ծառայութեան հետ, որը

³ <http://ww1.antiochian.org/node/19193> (առ 11/11/2023)

վատահուած է տուեալ անհատին: Եթէ կուսակրօն քահանային դիմում են «Հայր Սուրբ», դա ոչ թէ այն բանի համար է, որ նա անձնապէս անելի սուրբ է, քան ցանկացած սուրբ, այլ այն պատճառով, որ նա բարձր, սուրբ եւ պատասխանատու ծառայութիւն է մատուցում: Պատուոյ կոչումների ու տիտղոսների մէջ դրսեւորում է այն յարգանքը, որը հաւատացեալները տալիս են Եկեղեցու օծեալ սպասաւորներին: Հայ Եկեղեցում հոգեւորականներին դիմելիս պէտք է կոչել՝ «Սրբազան Հայր» (եթէ նա եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս է), «Հայր Սուրբ» (եթէ նա կուսակրօն քահանայ է) եւ «Տէր Հայր» (եթէ նա ամուսնացած քահանայ է): Ողջունելիս ասում ենք. «Աստուած օգնական, Սրբազան Հայր Սուրբ» (եթէ նա եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս է), «Աստուած օգնական, Հայր Սուրբ» (եթէ նա կուսակրօն քահանայ է), եւ «Օրհնեցէք Տէր Հայր» (եթէ նա ամուսնացած քահանայ է): Իսկ կաթողիկոսին ողջունում ենք՝ ասելով. «Աստուած օգնական, Վեհափառ Տէր»:

➤ Հերձուածող քարոզիչներին պէտք է հարցնել, որ եթէ իրենք այդքան խստապահանջ են Աստծու խօսքի նկատմամբ եւ իսկապէս ունեն այն համոզումը, թէ երկրի վրայ չի կարելի որեւէ մէկին «հայր» կոչել, ապա նրանք իրենց հայրերին արդեօք «հայր» չե՞ն կոչում: Վատահաբար կոչում են: Ուրեմն ինչո՞ւ չեն արգելում իրենց զաւակներին, որպէսզի իրենց «հայր» կամ «հայրիկ» չկոչեն: Եւ ինչպէ՞ս «հայր» չկոչել այն հովուին, ով Մովսէս մարգարէի նման նախընտրում է իր անունը ջնջուած տեսնել Կենաց Մատեանից, քան թէ պատժուած տեսնել իր հօտը (տե՛ս Ելք 32, 31):

Ինչո՞ւ ենք քահանային «տեր» կոչում

➤ Հերձուածողները մեզ մեղադրում են, որ քահանային դիմում ենք «տեր» բառով: Մինչդեռ մենք չենք օգտագործում ենք «տեր» պարզ դիմելաձևը Աստուծու անուան իմաստով: Աստուածաշունչը յստակ ցոյց է տալիս, որ աստուածային բացարձակ իմաստով ոչ մէկին պետք չէ «տեր» կոչել, սակայն որպէս դիմելաձեւ դրանք կարելի է օգտագործել, ինչպէս արել են Քրիստոս եւ Նրա առաքեալները: Քրիստոս ընդունում է «տեր» բառի գործածութիւնը կեանքի տարբեր պարագաներում: Օրինակ՝ Տէրն ասում է. **«Աշակերտն աւելին չէ, քան վարդապետը, եւ որ էլ ծառան՝ քան իր տէրը: Աշակերտին հերիք է, եթէ լինի իր վարդապետի նման, եւ ծառային՝ իր տիրոջ նման. եթէ տանտիրոջը Բեեղզեբուղ կոչեցին, որչա՛փ եւս առաւել՝ Նրա ընտանիքը»** (Մատթ. 10, 24-25): Այստեղ Քրիստոս բացի «տեր» բառից օգտագործում է նաեւ «վարդապետ» բառը: Քրիստոս իր պատմած առակներում յաճախ համեմատութիւններ էր անում տիրոջ եւ ծառայի փոխյարաբերութիւնների միջեւ՝ շատ ընդունելի կերպով բազմաթիւ անգամներ գործածելով «տեր» բառը (տե՛ս Մատթ. 13, 27-29. 52; 18, 24-25, 33-35; 24, 21. 33. 40; 45-51; 25, 19-21; Դուկ. 17, 9-10; 20, 15):

➤ «Տէր» բառը վերաբերում է երկնային եւ երկրային տերերին, ինչպիսիք են՝ Աստուածը, թագաւորը, հրամանատարը, ամուսինը, կառավարիչը, իշխանը, մարգարէ, առաջնորդը, հայրը եւ զօրավարը: Ծննդոց գրքում կարդում ենք. **«Սարան իր մտքում ծիծաղեց՝**

ասելով. «Այն, ինչ մինչեւ այժմ չկարողացայ անել, հիմա՞ պիտի կարողանամ: Իսկ իմ ամուսինն էլ ծերացել է» (Ծննդ. 18, 12): Այստեղ «ամուսին» բառը՝ եբրայերեն **יִתְּ** (ադոն) բառն է, որ թարգմանվում է «տեր», այսինքն՝ մեկը, ով իշխանություն ունի միևսի վրայ: Պետրոս առաքելալն էլ նշում է. «Այդպես էր Սառան, որը հնազանդ էր Աբրահամին եւ նրան իր տերն էր կոչում» (1 Պետ. 3, 6):

➤ «Գործք Առաքելոց» գրքում կարդում ենք, որ երբ բանտապետն արթնացավ եւ բանտի դռները բացուած տեսավ, նա զարհուրած ընկավ Պօղոսի եւ Շիղայի առաջ. եւ նրանց դուրս բերելով՝ ասաց. «Տիարք իմ, ես ի՞նչ պետք է անեմ, որ փրկուեմ» (Գործք 16, 27-30):

➤ «Տեր» բառն ընդունելի են համարել նաեւ Քրիստոսի առաքելները եւ շատ անգամներ են այն գործածել իրենց գրուածքներում: Պօղոս առաքելալն իր նամակներում «տեր» բառն օգտագործում է տարբեր առիթներով: Ահա մի քանի օրինակներ.

«Կինն իր մարմնի տերը չէ, այլ՝ մարդը: Նոյնպես եւ՝ մարդն իր մարմնի տերը չէ, այլ՝ կինը» (Ա. Կորնթ. 7, 4):

«Թեպետեւ այսպես կոչուած աստուածներ կան թե՛ երկնքում եւ թե՛ երկրի վրայ. արդարեւ, կան բազում աստուածներ եւ բազում տերեր: Բայց մեզ համար միայն մե՛կ Աստուած կայ, Յայր, որ ստեղծել է ամեն բան, եւ մենք ապրում ենք նրանով. եւ՝ միայն մե՛կ Տեր Յիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղծուեց ամեն ինչ, եւ մենք ապրում ենք նրանով» (Ա. Կորնթ. 8, 5-6):

«Ծառանե՛ր, ամեն ինչում հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տերերին, ոչ թէ մարդահաճոյ կերպով,

ցուցադրական ծառայութեամբ, այլ սրտի անկեղծութեամբ՝ երկիւղ կրելով Տիրոջից» (Կող. 3, 22):

«Ծառանէ՛ր, հնազա՛նդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին ահով եւ դողով եւ անկեղծ սրտով, ինչպէս հնազանդ էք Քրիստոսին... եւ դուք, տէրէ՛ր, նո՛յնն արեք նրանց հանդէպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացէ՛ք, որ ե՛լ նրանք, ե՛լ դուք Տէր ունէք երկնքում, եւ նրա առաջ աչառութիւն չկայ» (Եփես. 6, 5. 9):

«Յորդորի՛ր ծառաներին, որ հնազանդ լինեն իրենց տէրերին եւ ամէն ինչում լինեն հաճելի նրանց. ոչ հակառակուող» (Տիտ. 2, 9):

«Բոլոր նրանք, ովքեր ծառայութեան լծի տակ են, նրանցից իւրաքանչիւրը թող իր տէրերին պատուի արժանի համարի, որպէսզի Աստծու անունն ու վարդապետութիւնը չանարգուի: Իսկ նրանք, որ հաւատացեալ տէրեր ունեն, թող չարհամարհեն, որ նրանք եղբայրներ են, այլ աւելի լաւ ծառայեն, քանի որ հաւատացեալներ են եւ սիրելի եղբայրներ, որոնք յանձն են առել բարերարութիւնը» (Ա. Տիմ. 6, 1-2):

➤ Ըստ Պետրոս առաքեալի՝ այս երկրի վրայ բոլոր «տէր» կոչուողներն իրենց միակ ու բացարձակ Տէրն ունեն երկնքում. «Յարգեցէ՛ք բոլորին, սիրեցէ՛ք եղբայրութիւնը, վախեցէ՛ք Աստծուց, պատուեցէ՛ք թագաւորներին: Ծառանէ՛ր, ամէն ինչում երկիւղով հնազա՛նդ եղէք տէրերին, ոչ միայն բարիներին եւ հեզաբարոներին, այլեւ դաժաններին, քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մէկը յանիրաւի վիշտ է կրում բարի խղճով» (Ա. Պետր. 2, 18-20): Նաեւ գրում է. «Այդպէս էր Սառան,

որը հնազանդ էր Աբրահամին եւ նրան իր տէրն էր կոչում. եւ դուք նրա զաւակները եղաք» (Ա. Պետր. 3, 6):

Յովհաննէս Աստուածաբանը եւս իր «Յայտնութիւն» գրքում ասում է. «Եւ սրանք պատերազմելու են Գառան դէմ, եւ Գառը նրանց յաղթելու է, քանի որ նա Տէրն է տէրերի եւ Թագաւորը՝ թագաւորների. եւ ովքեր նրա հետ են, կանչուածներ են, ընտրեալներ եւ հաւատարիմներ» (Յայտ. 17, 14): Եւ դարձեալ՝ «Եւ իր պատմութեանի ու իր մարմնի մասերի վրայ կար գրուած մի գրութիւն՝ Թագաւոր թագաւորների եւ Տէր տէրերի» (Յայտն. 19, 16):

**WHY DO WE CALL A PRIEST
“FATHER”?**

PREFACE

Some extreme teachings and religious groups criticize us for calling our clergymen “teacher” (rabbi, vartabed), “father” (hayr), or “der” (master, lord⁴). They claim that this contradicts the scriptural doctrine and that only God is worthy of those titles because Jesus gave the following order, **“But do not call anyone a teacher, because your teacher is one... And do not call anyone on earth your Father because your Father is one who is in heaven. And do not be called teachers, because Christ is your teacher.”** (Mt. 23, 8-10)

Here, the Lord Jesus wanted to say that those people who are glory-loving people who teach but do not practice what they teach should not be called *teachers* (vartabeds). Those who do not practice fatherhood, and instead of leading and shepherding their flocks, shepherds themselves, should not be called *father* (see Ezek. 34, 8). From the scriptures and apostolic words, the Lord Jesus blames the inner spiritual condition of the Pharisees; that is, they blame not those who call the clergymen teacher, father, or der, but those who, to serve the glory of their persons, demand to be called so, exalting their persons, contrary to the following command of the Lord, **“And the elder of you will be your**

⁴ Armenian priests who do not choose celibacy are allowed to be married before ordination. They are known as “Kahana”, and the surnames of their descendants have adopted the prefix “Der” (or “Ter” in Eastern Armenian), meaning “master” or “lord”, to indicate their lineage.

servant. Whoever exalts himself, humbles himself. and whoever humbles himself will be exalted.” (Mt. 23, 11-12)

From the very beginning of the history of the church, as it was in the time of the Old Testament in Israel, those anointed by God for service were called by names expressing a certain warmth and dignity, such as teacher, rabbi, master, father, prophet, and leader. Just as there is someone in our families whom we lovingly call *father*, we respect and honor all those who led us to spiritual rebirth through our Lord Jesus Christ.

